

**ՄԵԲԵՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԱՄԱԲԱՐԲԱՌԸ**

Մեբեոսը VII դ. հայ պատմիչ է, որի Պատմությունը, ունենալով միջազգային արժեք, թարգմանվել է բազմաթիվ լեզուներով. գրաբար բնագիրը թարգմանել են ռուսերեն (1862 թ., Բ. Պատկանյան), ֆրանսերեն (1904 թ., Ֆ. Մակլեր), գերմաներեն (1875 թ., Հ. Հյուբշման), արևմտահայերեն (1990 թ., Ա. Գաբուճյան), արևելահայերեն հատվածական թարգմանություններ (1981 թ., Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, 1967 թ., Լեո, Երկ. ժող., հ. 2, էջ 25 և այլն):

Արդ արևելահայերեն առաջին ամբողջական թարգմանությունն է ընթերցողի սեղանին, որն առաջաբանով ու ծանոթագրություններով լույս են ընծայել Գ. Խաչատրյանը և Վ. Եղիազարյանը¹: Սույն թարգմանությունից մեկ տարի առաջ Գ. Խաչատրյանը կազմել ու հրատարակել է նաև Մեբեոսի Պատմության համաբարբառը²: Մեբեոսի Պատմության թարգմանիչները նպատակ ունեն ընթերցողներին և մասնագետներին ներկայացնելու «հայ ժողովրդի համար դրամատիկական անցքերով լեցուն մի ժամանակաշրջանի նկարագրությունը» (էջ Զ): Գիրքը բաղկացած է երեք մասից՝ առաջաբան (էջ Ա-Ը), բուն պատմություն (էջ 4-293), ծանոթագրություններ՝ բնագրի ծանոթագրություններ (էջ 314-223՝ 105 ծանոթագրություն) և թարգմանության ծանոթագրություններ (էջ 314-370՝ 556 ծանոթագրություն): Առանձին տրված են նաև գլուխների ցանկը (էջ 294-313՝ Ա-ԾԲ), համառոտագրությունները (էջ 371-372), հատուկ անունների ցանկը (էջ 373-393՝ շուրջ 1600 անվանում):

Առաջաբանում հակիրճ խոսվում է մի քանի էական հարցերի մասին, որոնք առնչվում են Մեբեոսի անձին և նրա պատմությանը: Նշվում է, որ եղել են տարակարծություններ, սակայն իրողությունն այն է, որ «Պատմագիրք Մեբեոսի ի Հերակլն» մատյանը հենց Մեբեոսի Պատմությունն է, ինչպես վկայում են Ս. Տարոնացի Ասողիկը, Կ. Գանձակեցին, Մ. Այրիվանեցին և ուրիշներ: Մեբեոսի Պատմության հրատարակությամբ զբաղվել են շատերը. հիշատակության արժանի են հատկապես Ստ. Մալխասյանի և Գ. Աբգարյանի կազմած քննական բնագրերը³: Արևելահայերենի սույն թարգմանությունը կատարվել է ըստ Գ. Աբգարյանի քննական բնագրի:

Մեբեոսի երկը «Խորենացու պատմության հնագույն հիմքեր ունի» (էջ Ա) և կարող է ամբողջական հայոց պատմություն համարվել, քանի որ այն Բաբելոնի աշտարակաշինությունից հետո հայ ժողովրդի պատմության հնագույն ակունք-

¹ Տե՛ս **Մեբեոս**, Պատմություն, Արևելահայերեն թարգմանություն, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի, Ե., 2005, էջ 394:

² Տե՛ս Հայկական համաբարբառ, 17, Մեբեոս, Ե., 2004, 480 էջ (աշխատասիրությամբ՝ Գ. Կ. Խաչատրյանի):

³ Տե՛ս **Մեբեոսի** եպիսկոպոսի Պատմութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց: Առաջաբանը և ծանոթությունները Ստ. Մալխասեանցի, Ե., 1939 և Պատմութիւն **Մեբեոսի**, աշխատասիրությամբ ք.Վ.Աբգարյանի, Ե., 1979:

ներից մինչև 661 թ., այսինքն՝ մինչև Սեբեոսի ապրած ժամանակներն ընդգրկող տարեգրությունն է (էջ Գ): Ծանոթանալով առաջաբանում արձարժված խնդիրներին՝ կարելի է ամբողջական պատկերացում ունենալ Սեբեոսի Պատմության բովանդակության մասին. ի՞նչ ժամանակների ու դարերի նյութ է ընդգրկված, ո՞ր ժողովուրդների, երկրների սոցիալ-քաղաքական, պետական ու պատերազմական նշանավոր անցքեր, գործիչներ ու դեմքեր են բնութագրված, այդ ամենի մեջ ի՞նչ կշիռ ունի հայ ժողովուրդը, որպիսի՞ գորություն ունի քրիստոնեական հավատի պաշտամունքը և այլն:

Նշենք Սեբեոսի Պատմության մի քանի նշանավոր թեմաներ, դրվագներ ու կերպավորումներ. ա) Առաջին բաժնում տեղ են գտել մեր քաջ նախնիների մասին վիպասանությունները (Հայկ, Հայկի սերունդներ, Արամ, Արա Գեղեցիկ և այլք): Բ) Երկրորդ բաժնում թվագրված են հայոց, պարսից և հունաց թագավորների տիրապետության տարիները, առանձին տրվում են Մամիկոնյանների ծննդաբանությունը, Արտաշիսյան թագավորության անկման, հույն-պարսկական տիրապետության ժամանակների և այլ դեպքերը: Հատկապես մանրամասնորեն պատմվում է 614 թ. պարսիկների կողմից Երուսաղեմի գրավման, Հերակլ կայսրի և Խոսրով II թագավորի պատերազմների, հույն-պարսկական հարաբերությունների և հայերի նկատմամբ նրանց վարած քաղաքականության մասին: Այստեղ ամենաբնորոշ օրինակը Մորիկ կայսրի (582-602 թթ.) թունոտ ու վտանգավոր նամակն է պարսից թագավորին: Իսկ Պատմության վերջում խոսվում է իսմայելացիների (=արաբների) ազգային միավորման, ռազմաքաղաքական հզորացման, պարսից վերջին թագավորի սպանության, դեպի Հայաստան արաբների կատարած առաջին ավերիչ ասպատակությունների մասին (էջ Դ): Դ) Պատմությունը ողողված է խոր հայրենասիրությամբ. հայ նախարարները՝ Սմբատ Բագրատունին, Թեոդորոս Ռշտունին և այլք, ազգանվեր գործունեություն են ծավալում՝ դիմադրելով արտաքին թշնամուն և պայքարելով եկեղեցու անկախության համար: Այդ նպատակով տաճարներ և այլ շինություններ են կառուցվում, որոնց մասին պատմիչը հիացմունքով է խոսում: Պետք էր դիմագրավել բյուզանդական քաղկեդոնական եկեղեցու ճնշումներին, ուստի մեծ պատասխանատվությամբ են լցվում հայ եկեղեցին և նրա գործիչները: Ե) Պատմությունն արժևորվում է նաև աղբյուրագիտական և ընդհանուր պատմության առումներով: Այն տեղեկություններ է տալիս ոչ միայն հայերի, այլև բյուզանդացիների, պարսիկների, արաբների, ասորիների, մարերի, վրացիների, հոների և այլոց մասին (էջ Ե): Զ) Պատերազմական և բնության տեսարանների, բնակավայրերի, մարդկային բնավորությունների և արարքների նկարագրությունները երբեմն գեղարվեստական մակարդակի են հասնում, որոնք արդյունք են պատմիչի անձնական կարողությունների և հայրենասիրական զգացմունքների (հիշենք Սմբատ Բագրատունու գազանամարտի, Մուշեղ Մամիկոնյանի՝ թշնամու զորքի առջև հերոսական պահվածքի և այլ բնութագրումներ ու դրվագներ):

Սեբեոսի Պատմությունն այլ գնահատելի ընդգրկումներ էլ ունի, հետևապես *հարուստ բովանդակությամբ այսպիսի երկի արևելահայերեն թարգմանությունը խիստ այժմեական արժեք ունի*: Բոլոր ժամանակների ընթերցողը դրա պահանջը զգում է, որի համար ըստ ամենայնի դրվատանքի խոսք պիտի ասել թարգմանիչներ Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի մասին, որ հանդես են եկել չափազանց կարևոր և լուրջ առաքելությամբ:

Այժմ թարգմանության որակի մասին:

Գրաբարից աշխարհաբար կատարվող թարգմանության հարցում, մեր կարծիքով, կարևոր են՝ ա) հայերենի երկու շրջանների քերականական օրինակափութայինների հաշվառումը, բ) բառիմաստների դրսևորումները. պատմական շրջանում կրած իմաստային փոփոխությունների պատճառով առաջացած իմաստային տարբերությունների հաշվառումը, գ) նյութի պատմականության վերարտադրության ապահովումը և հաստատումը՝ համապատասխան հղումներով ու ծանոթագրություններով, դ) բնագրային ընդունելի և ճշգրիտ փոփոխությունները:

Միանգամից ասենք, որ այս պահանջներն իրագործված են Սեբեոսի Պատմության արևելահայերեն թարգմանության մեջ. թարգմանիչներն այն կատարել են մասնագիտական բարեխղճությամբ ու պատասխանատվությամբ⁴:

Այսպես՝ 1. Մտքի արտահայտության ամենակարևոր միջոցը նախադասությունն է, իսկ նախադասության կառուցվածքի հարցում գրաբարը և աշխարհաբարը տարբերություններ ունեն:

Նախադասությունների և դրանց անդամների շարադասական տարբերությունների լուծման խնդիրը դուրին երևույթ է. դրանց հետևառաջության կարգավորմամբ լուծվում է հարցը: Օրինակ՝ «... պատեալ զթիկամբք լերինն Արագածայ՝ երթեալ անցանէ ընդ Շիրակ և ընդ Վանանդ մերձ քաղաքաւն Կարնոյ և երթեալ հասանէ ի սահմանս իւր» (էջ 152)՝ «...շուռ գալով Արագած լեռան թիկունքով՝ գնաց անցավ Շիրակով ու Վանանդով և Կարին քաղաքի մոտով շարժվեց հասավ իր սահմանները» (էջ 153) կամ՝ «Հապճեպ ստիպով ի ձեռն թեթևրնթաց երագոտն սուրհանդակաց հրաման թագաւորին հասաւ» (էջ 152)՝ «Թեթևրնթաց, արագոտն սուրհանդակների միջոցով հապշտապ հասավ «պարսից» թագավորի հրամանը» (էջ 153) և այլն: Շարադասական փոփոխությունները կատարվում են վարպետորեն ու մասնագիտաբար:

Նախադասության կառուցվածքի առանձնահատկություններից առավել ուշադրության արժանի են թեք հոլովներով կառույցները՝ դերբայական նախադասությունները: Դրանց ճիշտ ընկալումը և աշխարհաբար թարգմանությունն առաջնային լուծումներից են: Թարգմանիչները ճիշտ են ընկալում այդպիսի կառույցները:

Անցյալ դերբայով կամ դրանով և օժանդակ բայով կազմված ստորոգյալների պահանջով ենթական դրվում է սեռական հոլովով: Այդպիսի կառույցները բնորոշ են գրաբարին և լայն գործածություն ունեն: Դրանք հաճախական կիրառություն ունեն նաև Սեբեոսի Պատմության մեջ⁵, որի բազմաթիվ էջերում 2-3 օրինակ է հանդիպում: Նման կառույցներն անխտիր ճիշտ ու տեղին փոխադրությամբ են տրված: Մի երկու օրինակ՝ Եւ բարձեալ զմարմին նորա քրիստոնէիցն՝ տարեալ եղին ի շիրիմս թագաւորացն (էջ 52)՝ Եւ քրիստոնյաները, վերցնելով նրա դին, տարան դրին թագավորաց գերեզմանոցում (էջ 53): Ու յայնմ պատերազմի ոչ փոքր ինչ քաջութին գործեալ հայակոյտ գաւրացն (էջ 108)՝ Այդ պատերազմում հայկական զորքերը քիչ քաջություն չգործեցին (էջ 109): Որոց էին սպանեալ խոզս

⁴ Այստեղ հատկապես ընդգծում ենք Գ. Խաչատրյանի վաստակը գրաբարի քերականության ուսումնասիրության բնագավառում, որը ստույգ հիմք է նաև թարգմանիչի համար: Տե՛ս նրա «Գրաբարի միակազմ նախադասությունները», Ե., 2002, էջ 225 և այլուր:

⁵ Տե՛ս էջ 4, 6, 8, 10, 24, 52, 68, 68, 70, 74, 78, 80, 80, 82, 82, 82, 84, 84, 96, 108, 112, 122, 150, 150, 150, 152, 152, 166, 208, 208, 224, 274, 286 և այլն:

երկուս և *տարեալ եղեալ* ի տեղի աղաթիցն (էջ 208)՝ *Որոնք* երկու խոգ *էին սպանել, տարել դրել* աղոթատեղիում (209) և այլն:

Տրական հոլովով ենթական գործածվում է անորոշ դերբայով (*dativus cum initivo*) կամ միադիմի բայով և անորոշ դերբայով ձևավորված ստորոգյալների հետ: Մեքեոսի երկում նույնպիսի կիրառություններ կան, միայն նշված առաջին տեսակի կառույցով եզակի օրինակ է հանդիպում, որն էլ ճիշտ է թարգմանված՝ Ասե ցկաթողիկոսն ցեզր՝ *երթալ նմա* յերկիր սահմանայն Յունաց և *հաղորդել* արինաւք ընդ կայսեր (էջ 190)՝ *Եզր կաթողիկոսին* ասաց, որ *նա գնա* հունաց երկրի սահմանները և հաղորդություն *ստանա* կայսեր հետ (էջ 191):

Տրական հոլովով ենթակա ունեցող մյուս կառույցը ոչ հաճախական գործածություն ունի (էջ 22, 80, 192, 250 և այլն): Դրանց թարգմանությունը երկու ձևով է կատարված՝ 1) տրական ենթական փոխադրված է ուղղական ենթակայով, ինչպես՝ Ապա *ոչ է պարտ լինել* այդմ *բանի* (էջ 192)՝ Ուստի *պետք չէ*, որ այդ *բանը կատարվի* (էջ 193): Եւ *մեզ մի՛ լիցի պարծել* բայց միայն ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (էջ 250)՝ Եվ *մենք* միայն մեր տեր Հիսուս Քրիստոսի խաչով *պիտի պարծենանք* (էջ 251), 2) Եւ կամ *ի՛նձ արժանի իցէ գիտել* զչարութիւնդ Պարսից (էջ 80)՝ Եւ կամ *ինձ արժէ՞ իմանալ* պարսիկներիդ չարությունը (էջ 81) օրինակում տրական ենթական փոխադրված է անուղղակի խնդրով⁶, որը խոսակցական լեզվի երանգ ունի, ուստի ճիշտ է ասել՝ *Արժէ՞*, որ *ես իմանամ...*

Այս մոտեցումով էջ 22-ի վերնագիրը դիտարկելու դեպքում կառաջանա երկու տեսակ թարգմանություն՝ 1) Թե՛ *պիտոյ է քեզ* գորդի ի հաւտէ ճանաչել (= Եթե *դու պետք է ճանաչես* հորից որդի... <Ապա թող ես երկրորդեմ պատմագրություններից>), 2) Թե՛ *պիտոյ է քեզ* (= Եթե *քեզ պետք է*). Եթե այս կառույցից անջատ է դիտվում «գորդի ի հաւտէ ճանաչել» կապակցությունը, ուրեմն պետք է թարգմանել կրավորական իմաստով. «թող երկրորդեմ»... *հորից որդի ճանաչվելու համար* (այսինքն՝ Մ. Խորենացու և Ս. Տարոնացու ժառանգորդը՝ շարունակողը լինելու համար):

Օգտվելով առիթից՝ հիշենք նաև, որ թարգմանիչներն առաջաբանում վկայակոչում են Գ. Բաղդիշյանի՝ Մեքեոսի Պատմությանը վերաբերող⁷ որոշ եզրակացություններ, որոնցից մեկում ասված է. «Պատմիչի լեզվում թեև շատ կոդներով պահպանվում են դասական գրաբարի ձևաբանական, շարահյուսական ու ոճական առանձնահատկությունները, բայց նրանում *կան նաև զգալի շեղումներ*» (էջ 2, ընդգծումը մերն է - Է. Մ.): Մեր կարծիքով, կան ոչ թե զգալի շեղումներ, այլ տարբերություններ: Ինչպես երևում է ենթակայի հոլովական և ստորոգյալի կառուցվածքային արտահայտությունից, շեղումներ չկան, բայց տարբերություններ կան. տրական հոլովով ենթակայի գործածության հաճախականությունը նվազում է, անորոշի հետ հայցական հոլովով ենթակայի (*accusativus*

⁶ Մեզ հայտնի է, որ հիշյալ բնագրային կառույցներում Գ.Խաչատրյանը տրական հոլովով բառը ենթակա չի համարում, այլ հանգման խնդիր: Մենք այդպիսի տրականը ենթակա ենք համարում ոչ թե թարգմանության համար, այլ համարելով այն առարկան, որին հատկանիշ է վերագրվում միադիմի բայի և անորոշ դերբայի միջոցով, ինչնիցե, կարծիքների խնդիր է, սակայն հստակ երևում է՝ առաջին երկու օրինակների թարգմանությունը հիանալի է, երրորդինը՝ անհնազող և անընդունելի:

⁷ Հմմտ. Գ. Կ. Բաղդիշյան, Մեքեոսի լեզուն և ոճը, Հայոց լեզվի պատմության հարցեր, Ե., 1981:

cum infinitivo) գործածություն չկա: Բացահայտ ոճական տարբերություններ կան և պետք է լինեն, որովհետև V դարից անցում է կատարվել VII դար:

Քերականական իրողությունների ըմբռնման և թարգմանություն կատարելիս նրանց գործադրման հարցում թարգմանիչները դրսևորում են նյութի իմացություն և մասնագիտական պատասխանատվություն:

2. Գրաբարից աշխարհաբար կատարվող թարգմանություններում կարևորվում են նաև աշխարհաբարյան բառերի ու բառակապակցությունների ընտրությունն ու գործածությունները. առանց նրանց արտահայտած իմաստների և քերականական հատկանիշների հաշվառման հնարավոր չէ ստույգ և ճշմարիտ թարգմանություն կատարել: Սովորաբար կատարվում է երկու տեսակ թարգմանություն՝ 1) *բառացի*, որը թարգմանության ճշգրիտ եղանակն է, ինչպես՝ Եւ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան (էջ 84)՝ Եվ հաստատվեց թագավորության աթոռին (էջ 85) կամ՝ Ետ և զմեծ մասն Վրաց աշխարհին մինչև ցփխիս քաղաք (էջ 8)՝ Տվեց նաև Վրաց աշխարհի մեծ մասը՝ մինչև Տփլիս քաղաքը (էջ 85) և 2) *իմաստային համապատասխան հարաբերությամբ*, ինչպես՝ Եւ այնչափ սաստիկ լինէր կոտորածն, մինչև զի խաղացեալ վտակաց սաստկութիւն արեացն ոռոգանէր զերկիրն ամենայն (էջ 74)՝ Եվ այնչափ սաստիկ էր կոտորածը, որ արյան առատ վտակները հոսելով ոռոգեցին ամբողջ երկիրը (էջ 75) կամ՝ Եւ բազմութիւն ձերբակալաց ձիահեծելոց և փղահեծելոցն հրամայէր մերկացուցանել և կապել զձեռս ի վերայ ուսոց և արկանել կոխան ի ներքոյ ոտից փղացն (էջ 74)՝ Եվ հրամայեց մերկացնել ձի և փղի հեծնող բազում ձերբակալվածներին, ձեռքերը կապել ուսն ի վեր և գցել ի կոխ փղերի ոտքերի տակ (էջ 75):

Առաջնորդելով թարգմանության՝ իրենց համար հայտնի և մեր նշած եղանակներով՝ թարգմանիչները մեծ հաջողությամբ գրաբար բնագիրը վերածել են արևելահայերենի, որի ընթացքում անհրաժեշտ է եղել կատարել բառերի ու բառակապակցությունների ընտրություն, հավելում կամ կրճատում, իմաստային ու քերականական փոփոխություն, եղանակաժամանակային ձևերի միօրինականացում, նախադասության կառուցվածքային, շարադասական տեղաշարժ ու փոփոխություն, ոճական արտահայտությունների, բայասեռերի փոխակերպում, վերջապես, ծանոթագրությունների ձևով լրացուցիչ մեկնաբանություններ և այլն:

Հասկանալի է, որ այսպիսի բազմատեսակ ու ծանր աշխատանքի ընթացքում կարող են լինել նաև որոշ անճշտություններ, թերություններ ու վրիպումներ, որոնց մասին խոսելը միայն օգտակար կլինի գրքի վերահրատարակության և հեղինակների ապագա գործունեության հարցում: Այսպես՝ էջ 74-75-ում *նիւ* և *անդէն* բառերի ոչ ճիշտ թարգմանություն է կատարված: Այսպես՝ «...կային ի *նիւ* փղացն»՝ «...գտնվում էին փղերի *նիվերի վրա*», որտեղ *նիւ*-ը անհասկանալի է, որովհետև այդպիսի բառ չկա: ՆՀԲ-ն նշում է *նիւ*, *նու*, *ու* ձևերը, որ նշանակում են փղի, ձիու մեջքը՝ ուսից մինչև գավակը, թիկնամեջքը⁸: Ուրեմն՝ *նիւ* = *նյու* և ոչ թե *նիւ* (>նիվ), որը գործածվել է նաև Համաբարբառում (էջ 344):

Անդէն (= այնտեղ, նույն տեղը, նույն վայրում, հիշատակված տեղում, այլն՝ շուտափույթ, նույն ժամին, անհապաղ, իսկույն)⁹ բառը գործածված է երկու անգամ

⁸ Հմմտ. Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 2, Վենետիկ, 1837, էջ 427, 452, 555:

⁹ Հմմտ. նույն տեղում, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 132:

և թարգմանված է *դարձյալ, կրկին* իմաստներով, որ նշանակում է, թե շփոթված է *անդրէն* (= վերստին, դարձյալ, նորից, կրկին) բառի հետ (նրանց միջև իմաստային շփումներ կան¹⁰, սակայն ճիշտ է թարգմանել բառիդ բուն իմաստով):

Նույն էջում «բազմութիւն փղացն» երկու անգամ գործածված է, երկուսն էլ թարգմանված են «փղերի բազմություն», իսկ «ուղտուց և ջորուց բազմութեանն»՝ «բազմաթիվ ուղտերի և ջորիների» ձևով: Կարծում ենք՝ վերջինն է կիրառելի: Նույն տեղում «ամենեքեան լցան» թարգմանված է «բոլորը լիացան» ձևով. ընթերցողը ակամայից գուգորդում է *լնուլ* և *լիանալ* բայերը, որից գերծ լինելու համար կարելի է գործածել *ճոխանալ, հագենալ* բայերը:

Վիճելի է հետևյալ թարգմանությունը: Սմբատը կանչվում է պարսից արքունիք. «Եւ երթեալ յանդիման լինի թագաւորին ի Մեծ անուանեալ Դաստակերտն և *ելեալ արտաքս ի դահլիճն, նստի ի բոբ և ի բահղակ*» (էջ 120)՝ «Գնաց ներկայացավ թագավորին Մեծ անվանված Դաստակերտում և *դուրս գալով դահլիճից՝ նստեց <իր> բարձին*» (էջ 121). *ի դահլիճն* թարգմանել *դահլիճից* ճիշտ չէ: Հասկանալի է, որ դա կատարվում է «ելեալ արտաքս» կապակցության թելադրանքով, սակայն չի բացառվում, որ դա նշանակի *ինչ-որ տեղից* (= ինչ-որ տեղից դուրս եկավ՝ ելավ մտավ դահլիճ)¹¹: Իսկ *բոբ*-ը = գորգ, *բահղակ* անստույգ հոմանիշ բառ է¹²: Ընդգծված կապակցությունները թարգմանենք. *դուրս գալով դահլիճ՝ նստեց գորգին* (Հ. Աճառյանը նշում է, որ բահղակով զարդարվում էր թագավորական պալատի դահլիճը. սա նշանակում է, որ Սմբատը ոչ թե դուրս է գալիս դահլիճից, այլ մտնում է այնտեղ և «նստում բոբին ու բահղակին»):

Հանդիպում են բառեր, որոնք բնագրից թարգմանությանն են անցել նույնությամբ և ընթերցողի համար դյուրին հասկանալի, հեշտ ըմբռնելի չեն: Դրանցից են՝ *կորատոր* (էջ 193), *բարապան* (էջ 81,79), *փուշտիպան* (էջ 63,83...) և այլն: Անհրաժեշտ է դրանք ներկայացնել համապատասխան իմաստներով (*բարապան* = դռնապան, պահապան. *փուշտիպան* = համհարզ, թիկնապահ, օգնական):

Ուշադրության արժանի է *կորատոր* բառի գործածությունը. «Եւ բանք խորհրդեանն պատմեցաւ լիովին յունկն թագաւորին յումեմնէ *կորատորէ*» (էջ 192)՝ «Խորհրդի բաները լրիվ պատմվեցին թագավորի ականջին ոմն կորատորի կողմից» (էջ 193): *Կորատոր* բառաձևը, որից հղում է կատարված *կուրատոր* ձևին, նշված է միայն Միջին հայերենի բառարանում: Մյուս բառարանները նշում են միայն *կուրատոր* ձևը¹³, իսկ դա ընթերցողի համար անորոշություն է ստեղծում, ուստի կարելի էր բազմաթիվ իմաստներից մեկը գործածել թարգմանության մեջ:

3. Սեբեոսի Պատմության արևելահայերեն թարգմանության ընթացքում թարգմանիչների առջև ծառացել է անսահման աշխատատար, ծանր ու պատաս-

¹⁰ Նույն տեղում, էջ 137:

¹¹ Հմմտ. *ածել ի դահլիճն* (էջ 126)՝ *բերել դահլիճ* (էջ 127) և *ել ի խորանէն* (էջ 82)՝ *ելավ վրանից* (էջ 83):

¹² Տե՛ս Աճառյան Հր., Արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 394, 459:

¹³ Տե՛ս Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 1987, էջ 407 (*Կորատոր*, տե՛ս *Կուրատոր*), էջ 412 (*Կուրատոր*, լատ. *curator* < հուն. գ. *Վերակացու, խնամակալ, հոգաբարձու*): ՆՀԲ, հ. 1, էջ 1125 (*Կուրատոր*, ի, ից, գ. Բառ լատ. *Curator, Հոգաբարձու, գործակալ*): Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Ե., 1974, էջ 248 (*Կուրատոր*, ի, ներ, գ. 1. (հնգ.) *խնամակալ, հոգաբարձու*, 2. (բժշկ.)... *խնամարկու ուսանող*, 3. (հնգ.) ... *հատուկ հանձնաժողովի անդամ*: Լատ. *curator* – (խնամակալ):

խանատու մի խնդիր ևս, այն է՝ Պատմության բովանդակությունն ընթերցողին առավել հասկանալի դարձնելու համար *Ծանոթագրություններով ներկայացնել այն տվյալները, փաստերը, պատմություններն ու բնութագրումները, որոնք վերաբերում են պատմական Հայաստանի, հայ և այլ ժողովուրդների պատմաքաղաքական, սոցիալական, կրոնահոգեբանական, աշխարհագրական-տարածքային, լեզվական, կենցաղային բազմապիսի հարաբերություններին:*

Թարգմանական 556 ծանոթագրությամբ հառնում, ուղղակի տեսանելի են դառնում պատմական անցքերը, աշխարհագրական անունները՝ երկրները, տեղանունները, քաղաքները, ծովերը, լեռները, կիրճերը, անտառները, ծովերը, գետերը, լճերը և այլն, թագավորներն ու կայսրերը, իշխաններն ու գորագլուխները, գիտուններն ու լուսավորիչները, թշնամիներն ու հայրենասերները: Չափազանցություն չէ, եթե ասենք, որ այս բաժինը մի անթերի հանրագիտական ձեռնարկ է, որը կհետաքրքրի գիտնականին ու մտավորականին, հասարակ ընթերցողին, ուսանողին և աշակերտին, հային և օտարին:

4. Բնագրին վերաբերող ծանոթագրությունները նույնպես փաստական, գիտական արժեք ունեն, որոնք պահանջում են քննվող նյութին քաջատեղյակություն, աղբյուրագիտական վերլուծություններ, պատմագիտության ու բանասիրության բնագավառում եղած կարծիքների համադրում, սեփական եզրակացություններ անելու, բնագրային վիճելի խնդիրները լուծելու և մասնագիտական անհրաժեշտ իրողությունները հաստատելու կարողություն: *Թարգմանիչները տիրապետում են այդ ամենին և գործը կատարել են ամենայն լրջությամբ ու գիտական սկզբունքայնությամբ:* Նրանք կատարել են գիտական բնութագրումներ, մասնագիտական ճշգրտումներ, փաստական նյութի խելացի և համոզիչ փոփոխություններ, լրացումներ ու կրճատումներ, հաստատումներ ու ժխտումներ: Այդպիսի մոտեցումները նպաստել են թարգմանության որակի բարձրացմանը: Սրբագրումներն ու մեկնաբանություններն օգտակար են ոչ միայն քննական բնագրի պակասը լրացնելու, այլև հստակ թարգմանություն կատարելու համար: Հարկ չենք համարում օրինակներ վկայել. ընթերցողն ինքը կտեսնի, սակայն ուզում ենք ընդգծել մի քանի ծանոթագրություններ (8, 33, 47, 56, 94 և այլն), որոնք մեկնաբանություններով ու լուծումներով առավել հետաքրքրական են: Օրինակ՝ ծան. 94-ում թարգմանիչները պատասխանում են այն հարցին, թե *ովքեր են գնացել Հռոմ՝ Կոստանդինոսին ճշմարիտ հավատը սովորեցնելու:* Ըստ Գ. Աբգարյանի՝ հայտնի չէ, թե ովքեր են գնացել, մինչդեռ հաստատվում է, որ «Հռոմ կանչվեցին նրանք, ովքեր Նիկիայում կայսեր առաջ «քննեցին զգիրս և դրեցին հաւատս ճշմարիտ» (էջ 323)»:

Կան նաև վիճարկելի ծանոթագրություններ, որոնք սուր քննարկումների հարկ չունեն: Օրինակ՝ հենց առաջին և երկրորդ ծանոթագրությունները: Բնագրի *գաղտնիցս*-ը սրբագրված է *գաղտնիցս* (էջ 3-14) ձևով: Կարելի էր թողնել, որովհետև է ձայնավորը, շեշտակորույս լինելով, կարող է վերածվել *է*-ի կամ *ի*-ի (հմմտ. Ներսէս-Ներսեսի, Մովսէս-Մովսիսի): Կամ *ի մատեանս* սրբագրված է *ի մատեանն* ձևով (նույն տեղում): Հարկ չկա *ս*>*ն* փոփոխության, որովհետև բնագրում «հայելով *ի մատեանս*» (էջ 4) արտահայտության մեջ *ս*-ն հոգնակերտ մասնիկ չէ, այլ ցուցական հոդ՝ *նայելով մատյանին // նայելով*

այս մատյանին, հետո՝ հարկ չկա նաև *հայել* բայը թարգմանել՝ կրկնասեռության հատկանիշ վերագրելով. *նայելով... մատյանը* (էջ 5):

Ճիշտ այսպիսի մոտեցումով կարելի է բնութագրել «տերն կալալ գբերդն *Արփայս*» կառույցում *Արփայս* բառի *ս*-ն. *Արփայս* թարգմանված է *Արփայք* (էջ 267), որի մասին ծանոթագրված է, թե անծանոթ տեղանուն է (էջ 368): Հասկանալի է *զԱրփայս* հայցականը կունենա *Արփայք* ուղղական: Սակայն նույն էջում այլ բան ենք տեսնում. «...նստեին շուրջ *զԱրփայիս*» (էջ 266), որը հուշում է, թե ուղիղ ձևն է *Արփայ*, այլապես կլիներ *զԱրփայիս*. ուրեմն *ս*-ն ցուցականության իմաստ ունի: Համաբարբառում առանձին անուններ են համարված՝ *Արփայք* և *Արփայ* (էջ 70), մինչդեռ թարգմանության մեջ *Արփայիս*-ը՝ *Արփայք* (էջ 267):

5. Մեծ բարեխղճությամբ են կատարված ու կազմված թարգմանությանը կցված հատկանունների ցանկը (նշել ենք՝ շուրջ 1600 անուն) և Սեբեոսի Պատմության համաբարբառը: Ընդ որում՝ ցանկը թարգմանիչների միասնական աշխատանքի արդյունք է, համաբարբառը՝ միայն Գ. Խաչատրյանի:

Համաբարբառն ունի շուրջ 4000 բառահոդված, ինչպես նաև հատուկ անունների ցանկ, որտեղ տրված են նաև նրանց գործածության հաճախականությունները: Թե որքա՞ն է անհրաժեշտ և օգտակար համաբարբառը, կարող են զգալ ու պատասխանել գիտությամբ զբաղվողներն ու ուսումնասիրություն կատարողները:

Այսպիսով՝ Սեբեոսի Պատմության գրաբար բնագրի արևելահայերեն թարգմանությունը և համաբարբառը արդի բանասիրության և պատմագրության նվաճումներից են՝ արժանի ամենաբարձր գնահատականի: Իսկ Գ. Խաչատրյանը և Վ. Եղիազարյանը, որ բացում են գիտության երախտավորների դուռը, ընթերցողին ներկայանում են որպես հմուտ բանասերներ և հայրենասեր քաղաքացիներ՝ արժանի ամենաբարձր պատվի ու հարգանքի:

ՄԿՐՏՉՅԱՆ Է. Ս.

Բանասիրական գիտությունների դոկտոր